


2989

207q

4-42

~~293~~ ~~X~~



~~152/207~~

Անգղիերենից — Ռուերեն

Մ. Ա. Է.

Մ Ի Ս Ի Օ Ն Ա Ր

Հ Ա Յ Ր Գ Ա Մ Ի Ա Ն Վ Է Յ Ս Տ Է Ր Ի

Կ Ե Ա Ն Բ Ը

Գ.



Տ Փ Խ Ի Ս

Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի եւ Ընկ.

Միքայելիան փող. տուն № 81.

1896

36052

~~2079 արարած - երկ~~
~~4-49 քիմիկ շե~~

ՉԱ 4810 23/80թ

1008
36052
36053

207գ. ա ՝

23 SEP 2009

Լ-42

Անգղիերենից — Ռուսերեն


Ս. Ա. Է.

Մ Ի Ս Ի Օ Ն Ա Ր

Հ Ա Յ Ր Դ Ա Մ Ի Ա Ն Վ Է Յ Ս Տ Է Ր Ի

Կ Ե Ա Ն Ք Ը

Գ.



Տ Փ Խ Ի Ս

Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի եւ Ընկ.

Միքայելեան փող. տուն № 81.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 31-го Января 1896 г.

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Այս թարգմանութիւնը մասնաւոր դասերի արդիւնք է, ուրեմն ընկերովի աշխատութեան պտուղ: Դրանում մասնակցութիւն է ընդունել աշակերտուհիս՝ յարգելի օրիորդ Չուշանիկ Օհանեանը, որին Հայոց լեզուի մէջ վարժեցնելու համար օգտակար համարեցի լեզուի դասերին, ի միջի այլոց, ռեբէնից հայերէն թարգմանութիւններ անել տալ: Ահա այս գրքոյկը ծառայեց մեզ որպէս թարգմանութեան նիւթ:

Սակայն ինչն ստիպեց մեզ սոյն թարգմանութիւնը տպագրութեան յանձնել: Նախ՝ ընդհանրապէս մի փոքր լոյս սփռելու բորոտների կեանքի վրայ: Աւետարանում յաճախ ենք պատահում բորոտների մասին, բայց նրանց վերաբերեալ փոքր տեղեկութիւն ունինք. այն ինչ նրանք մարդկութեան ամենաթշուառ մասն են կազմում: Բորոտութիւնը վարակիչ և անբուժելի լինելով, դրանով վարակւողները բռնի կերպով անջատում են հասարակութիւնից և ընդ միշտ արսորում են հեռաւոր, անմարդաբնակ երկիրներ ու կղզիներ, ուր բաւական չէ, որ սարսափելի տանջանքներ կրելով՝ դոճ են գնում այդ հիւանդութեանը, այլև դատաւարտում են խոլ մոռացութեան, շատ անգամ սով ու քաղցի: Այդպիսի թշուառ դոճեր շատ կային և հին Հրէաստանում, որոնք թափառում էին բաց երկնքի տակ կամ ապաստան էին գտնում սարերի ծերպերում և քա-

րայրններում: Դրանցից էին և այն տասն ըոռոտը, որոնք մեր Տէր Յիսուսին հանդիպեցին:

Երկրորդ՝ մեզ գրաւեց հայր Դամիան Վէյտտէրի անվեհեր և օրինակելի կեանքը: Այստեղ տեսնում ենք, թէ ինչպէս անհատին ոգևորող գաղափարը աճեցնում, զարգացնում է նրա քաջութիւնը, նրա հոգեկան կարողութիւնները, նրա անընկճելի կամքը, այնպէս որ այդ թոյլ միութիւնը, այդ չնչին ատոմը, զինւած յիշեալ առաւելութիւններով, կռիւ է մղում անդիմադրելի արգելքների դէմ, յանձըն է առնում հերոսական զրկանքներ և մինչև անգամ համարձակ գիմում է դէպի կեանքի գողգոթա—դէպի բացարձակ անձնագոհութիւն: Այստեղ հայր Դամիանը ամուր վէմի պէս՝ կանգնած մեր առաջ իբրև պարտքի առաքեալ, իբրև քրիստոնեայ նահատակ, իբրև գաղափարի զինուոր, որ դրեց իր կեանքը «փոխանակ բազմաց»: Նա մոռացաւ իրան, յիշեց մոռացւածին, նա կորցրեց իրան, գտաւ կորածին, նա ձեռք կառկառեց մարդկութիւնից ատուած, մոռացւած և սարսափելի ախտից տանջւած ու այլանդակւած թշուառ բորոտին և ինքնակամ այդ անօրինակ գործի զոհարանի վրայ անձնւիրաբար դրեց իր անգին գանձը—կեանքը.... Եւ յաղթանակ տարաւ: Ահա մարդը: Ահա ճշմարիտ քրիստոնեան: Ահա Աւետարանի հարազատ աշակերտը: Ահա բարձր առաքինութեան մի անվհատ հերոս. իսկ և իսկ քրիստոնէական առաքինութիւն, որովհետև անձնագոհութիւնը առաքինութիւն է, անձնւիրութիւնը Աւետարանի դաւանանքն է:

Քաց այն, որ այդ կեանքը զոհւեցաւ իր մերձաւորի համար, բաց այն, որ նա քայքայեցաւ ըրորտութեան ցաւի աստիճանը մեղմացնելու համար, տառապեալին հոգեպէս մխրթարելու համար, այլ և այդ կեանքն ընդհանուրի մէջ կարեկցութիւն, սէր, ողորմածութիւն ծնեցրեց

դէպի տառապեալը դէպի տանջւողը: Հաղարաւորների մէջ օգնելու և գործը շարունակելու բուն ցանկութիւն առաջ բերաւ: Այնուհետև Լոնդոնի ամբողջ հասարակութիւնը առաջադրեց թափեց իր բարոյական և նիւթական հարստութիւնը դէպի Ովկիանիա: Քահանան իր համոզիչ, քրիստոնէական ոգևորող խօսքը, մխիթարը, գթութեան քոյրը իր կեանքը, զիտուելը՝ իր հանձարեղ միտքը, հարուստը՝ արծաթը, կինը՝ իր հանգերձանքը, մանուկը՝ զարձալիքները և այլն: Մի խօսքով՝ ամենքը պարտականութիւն յանձն առան իրանց լուսան թշուառ զոհերի գանձանակը ձգել և քաջալերել հերոսին:

Ընթերցողներ, հահ ձեզ հայր Դամիանի կեանքը զուտ աւետարանական ողորմածութեան և անձնագոհութեան օրինակ: Դուք ևս բռնկեցէք այդ սրբազան կրակով, ոգևորէք հերոսին և ոգևորէք նրա ազնիւ գաղափարներով: Հաւատ ընծայէք նրա գաղափարների և գործի ճշմարտութեանը: Դուք ևս գաղափարներին, գործին ծառայեցէք և երբ մի ազնիւ գործ էք նշմարում, մի խնայէք ձեր ողորմածութիւնը, արծաթը, զոհը, երբ վառւում է զոհարանը: Քրիստոնէական զոհաբերութիւնից միւր վախենայ:—Ով գաղափարին է ծառայում, նա ամենածանր զոհաբերութիւններ անելու պատրաստ պիտի լինի—նրան վիճակւում է իր ամենաազնիւ զգացմունքներն անգամ զոհել: Վերջապէս աւետարանական ողորմածութիւնը, զոհաբերութիւնը ժամանակիս նշանաբանն է, դարուս պահանջն է, և ամեն քրիստոնէի պարտքի դրօշակն է, որի երկու կողմում ևս հրեղէն տառերով գրուած է մեր Երկնային Վարդապետի ազգաբար և մարդասէր խօսքերը. մի կողմում—Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն կգանեն. իսկ միւսում—Ով կ'կորցնի, նա կգանի:

ԳԷՈՐԳ ՔԶ. ՄԿՐՏՈՒՄԵՆՆ

«Երուսաղէմ գնալիս նա անցնում էր Սամարիայի և Դալիլիայի միջով: Երբ մօտեցաւ մի զիւղի, նրան պատահեցին տասը բորոտ մարդիկ, որոնք հեռում կանգնած բարձրաձայն զոչում էին.—Յիսուս Վարդապետ, ողորմիր մեզ»:

Ղուկ. Աւետ. 97, XVII 11, 12, 13.

Յովսէփ Դամիան Վէյստէրը ծնւեց 1840 թւի Յունւարի 3-ին Բելգիայի Մալին քաղաքի մօտ գտնուող փոքրիկ գիւղում: Նրա աւագ եղբայր Պամֆիլին Լուվէն քաղաքի վանքումն էր, ուր և ուղևորւեց Դամիանը իր ծնողների հետ տասն և ինն տարեկան հասակում: Դամիանի եղբօր օրինակին հետևելու ցանկութիւնը շուտով իրագործւեց: Այդ վճռի հետ հաշտեցան նրա բարեպաշտ ծնողները. Այդպէս՝ Աստուծուն զոհ բերեցին անկեղծ հաւատով իրանց երկու որդիներին: 1863 թւին աւագ եղբայր Պամֆիլին միսիօնարի պաշտօն ստացաւ հեռաւոր Սանդվիչեան կղզիներում: Նա ուրախութեամբ պատրաստոււմ էր այդ ծառայութեան համար և գնալու օրն արդէն որոշած էր, երբ վտանգաւոր հիւանդութիւնը խլեց նրանից գնալու ամենայն հնարաւորութիւն: Դամիանը տեսնելով եղբօր վիշտը, հարցրեց՝—նրա համար միսիթարական չէր լինի, եթէ

ինքը նրան փոխարինէ: Հիւանդը զբազան պատասխան տը-
ւեց և երիտասարդ Դամիանը իսկոյն գրեց իւր ցանկու-
թեան մասին այն հոգեւոր միաբանութեան պետին, որին
Պամֆիլին պատկանում էր: Ի դարմանս մերձաւոր իշխանու-
թեան, նա թոյլաւութիւն ստացաւ շուտով ուղեորւիլ Սանդ-
վիչեան կղզիները: Հայր Դամիանը Բրեմենգաֆէնից դուրս
եկաւ 1869 թւի Հոկտեմբերի 30-ին: Հինգ ամիս շարու-
նակ ճանապարհորդում էր առագաստաւոր նաւով, որի ժա-
մանակ նաւը շուտ-շուտ վտանգների էր ենթարկւում: Մի
քանի ամիսից հետ՝ միսիօնարը գրում էր իր եղբօրը
«Ես մանրամասն ձեզ նկարագրեցի մեր Եւրոպայից Ովկիա-
նիա ունեցած ճանապարհորդութեան դժարութիւնները,
բայց միւս միսիօնարների ասելով մեր ճանապարհորդու-
թիւնն ակելի կարճ և յաջող էր ուրիշ շատերից»: Այստեղ
երևում է Հայր Դամիանի բնաւորութեան աչքի ընկնող
յատկութիւնը: Նա միշտ շատ աննշան կերպով էր խօսում
իր հետ պատահած վտանգների և դժարութիւնների մա-
սին, մինչև անգամ աշխատում էր նրանց ծանրութիւնը
փոքրացնել: Սանդվիչեան կղզիների Խոնոլուլի մայրաքա-
ղաքը հասնելով, Հայր Դամիանը բաւական երկար մնաց
այնտեղ և հէնց այնտեղ էլ քահանայ ձեռնադրւեց: Սանդ-
վիչեան կղզիները, որոնք գտնւում են Խաղաղ ովկիանո-
սում՝ Ամերիկայից և Աւստրալիայից հաւասար հեռաւորու-
թեամբ, գտել էր կապիտան Կուկը 1778 թւին: Այնտեղ
երկար ժամանակ գնում էին միայն կեա ձուկ որսողներն
ու վաճառականները, որոնք փչացնում էին խաղաղ բնակիչ-
ներին, սովրեցնելով նրանց ոգելից խմիչքների և ճնշում
էին իրանց կոշտ ու կոպիտ վարմունքով: 1820 թւին մի-
սիօնարներն առաջին անգամ Հաւայի կղզի եկան Բոստո-
նից: Նրանք բազմաւորութիւն ունեցան պատերազմատէր
թագուհի Կապիօլանիին քրիստոնեայ դարձնել, որ մեծ

աղգեցութիւն ունէր իր հպատակ բնակիչների վրայ: Հա-
ւայի կղզում ժողովուրդը յարգում էր Պեյլ կոչւած խստա-
բարոյ աստուածուհուն, որ ժողովրդական ականդութեան
համաձայն բնակւում էր հրաբլիսի մէջ, որի ստորոտում
ձգւում էր լաւայով ծածկւած մի դաշտավայր: Կապիօլանին
անցաւ այդ դաշտավայրը և հրաբլիսի խառնարանին մօ-
տենալով, սկսեց բացւածքի մէջ նետել աստուածուհուն
նւիրած ծառի ճղներն ու պտուղները. դրանով նա ցոյց
էր տալիս, որ չէ վախենում շարժել նրա բարկութիւնը:
Այն ժամանակ Կապիօլանին մի փոքր լուրթիւնից յետ՝
դարձաւ ժողովրդին հետեւալ խօսքերով. «Տեսնում էք, որ
Պեյլն ոչ մի զօրութիւն չունի. միայն մի Աստուած կայ և
մի Փրկիչ Յիսուս Քրիստոս»: Եւ դրանից յետ՝ երբ միսիօ-
նարները եռանդով սկսեցին բնիկներին քրիստոնեայ դարձ-
նել, առաջարկում էին նրանց հետեւալ հարցը. «Միրում
էք դուք ձեր թշնամիներին»: «Այո» պատասխանողները
քրիստոնեայ էին համարւում, իսկ «Ոչ» պատասխանողները
կռապաշտ: Միսիօնարների երկրորդ հարցը հետեւալն էր.
«Ո՞վ է ձեզ ստեղծել»: Վայրենիները պատասխանում էին.
«Մեծ Աստուածը, որ ստեղծել է երկիւնքն ու երկիրը»: Այդ-
պէս էր քրիստոնէութեան պաշտ, բայց արդիւնաբեր սկզբ-
բնաւորութիւնը Սանդվիչեան կղզիներում: 1839 թւին Գո-
նոլուլույում շինեցաւ առաջին եկեղեցին: Մինչև այդ ժա-
մանակ քրիստոնեաներն արդէն ապրում էին խմբերով կղզ-
զու դանազան մասերում, որոնք անջատւած էին յաճախ
մեծ և դժարանցանելի տարածութիւններով: Միսիօնար-
ների գալուստը այդ ցրուած քրիստոնեաների համար մի
հազաւակիւս և բազմաւոր դէպք էր: Ահա թէ ինչպիսի պայ-
մաններում սկսաւ հայր Դամիանը իր միսիօնարական գոր-
ծունէութիւնը: Տասը տարի շարունակ նրանց մէջ շրջե-
լով, նա քարոզում էր Աւետարանի ճշմարտութիւնը. նրա

գործունէութիւնը Պունա, Կոզալա և Կատակուայի շրջակայքում անջնջելի հետքեր թողեց: Ահա, թէ ինչ էր գրում նա իր ծնողներին 1865 թւին. «Որքան երջանիկ եմ, երբ երբեմնապէս կարողանում եմ ձեզ ասել, որ 150 մղոն շքրջագիծ ունեցող Խաղաղ օվկիանոսի մի կղզում ունիք մի որդի, որ ձեզ սիրում է, քահանայ, որ աղօթում է ձեզ համար, և միսիօնար, որ փնտռում է Քրիստոսի հօտի մտրոքեալ ոչխարներին: Երբեմն հիւանդներին այցելելիս, պատահում է անցնել 7—8 մղոն. թանկագին ծնողներ, աղօթեցէք միսիօնարների համար, նրանց վիճակում է կռւել մեծ դժուարութիւնների հետ»: Երբէք նա չէր մոռանում իր ընտանիքի անդամներին և խնդրում էր նրանց աղօթել իր համար, հաստատ հաւատացած լինելով աղօթքի ուժին: Հէնց այդ ուժի ազդեցութեան տակ հայր Դամիանը արտայայտում էր իր եռանդը և ցոյց էր տալիս գործով բուցավառ սէր դէպի իր մերձաւորը:

Մի անգամ նա ուղևորեց իրան անծանօթ մի գիւղ, որ նրա ենթադրութեամբ գտնւում էր լեռան միւս կողմը: Բայց երբ նա մօտեցաւ լեռան, տեսաւ, որ ձիով բարձրանալ անկարելի է, նա ստիպւած էր ձիուց իջնել ու մագրւցել սարի գագաթը, բայց նա իր առաջ բնակարանների փոխարէն տեսաւ միմիայն դաշտավայր, որի հտեր երկրորդ սարն էր բարձրանում: Հասնելով երկրորդի գագաթը, հայր Դամիանը դարձեալ իր առաջ տեսաւ դաշտավայր, իսկ նրա հտեր երրորդ ուղղահայեաց սար: Ատուծուն ջերմ աղօթելով, հայր Դամիանը յոգնած, տանջւած, արիւնտառ ձեռքերով երրորդ անգամ դժուարութեամբ մագրւցելով ուղղահայեաց սարը, հասաւ նրա գագաթը և վերջապէս տեսաւ այն գիւղը, որին այնպէս անհամբեր ձրգտում էր: Դժուար չէ երևակայել խեղճ մարդկանց ուրախութիւնը, երբ նրանից ստացան այն հոգեւոր օգնութիւնը,

որից զրկւած էին այնքան շատ տարիներ: Հայր Դամիանը խիստ վշտանում էր տեսնելով, որ Սանդովիչեան կղզիների քրիստոնեաներից շատերը միսիօնարների պակասութիւնից զրկւած են ոչ թէ կիրակի օրւայ ժամասացութիւնից այլև աստածային ուսմունքից: Այդ պակասը հնար եղածին չափ լրացնելու համար, նա սկսեց պարապել աւելի ընդունակ երիտասարդների հետ և պատրաստելով նրանց միսիօնարական գործի համար, դէպք եղածին պէս նրանց ուղարկում էր հեռաւոր կղզիներ: Նրանք այնտեղ բնակիչ ուղարկում էր հեռաւոր կղզիներ: Նրանք այնտեղ բնակիչներին բացատրում էին հաւատոյ վարդապետութիւնը, սովորեցնում էին Սաղմոսներ և իրանց խրատներով նրանց մէջ ամբացնում էին հաւատ: Հայր Դամիանը Սանդովիչեան կղզիներում շրջելիս, սովորեց տեղական լեզուն: Այդտեղ նա առիթ էր ունենում թշաւո բորոտների հանդիպել, որոնք այդ կղզիներում շատ էին: Հաւայի վարչութիւնը անհրաժեշտ էր համարում խիստ միջոցներ գործադրել բորոտներին Մոլոկայի կղզին տեղափոխելու, որ հէնց այդ նպատակի համար էլ նշանակւած էր: Հայր Դամիանը յաճախ պատահում էր ներկայ լինել անջատման սրտաշարժ տեսարանների, երբ ընտանիքի հիւանդ անդամները բաժանւում էին մնացող առողջներից: Յաճախ հիւանդները քրտորի չենթարկւելու համար, թագնւում էին բորոտուութեան առաջին նշանները յայտնելիս. հայր Դամիանը մի առանձին ցաւակցութեամբ էր վերաբերւում դէպի այդ թշաւոները:

Միգրէ եպիսկոպոսն այդ գիտենալով՝ Մոլոկայի բորոտներին այցելութեան գնալիս, վերցրեց նրան իր հետ: Հայր Դամիանը տեսնելով ամբողջացած մի ժողովուրդ, իր ամբողջ կեանքը դրանց զոհ բերելու ցանկութիւնն այն աստիճան ընդգրկեց նրա սիրտը, որ ինչպէս մի ողորմութիւն սկսեց խնդրել եպիսկոպոսից թոյլատրել իրան

ընդ միշտ մնալ բոլորից մերժւածները, արտուածները հետ, որոնց միայն երբեմն-երբեմն էին այցելում միտիոնարները: Ոչ որ իրաւունք չունէր մի այդպիսի անձնուրացութիւն պահանջել նրանից: Եպիսկոպոսը հասկացաւ, որ այդ խնդիրը մերժել անկարելի է, ընդունեց հայր Դամիանի դոհը, ուրախացաւ, որ Աստուած բազմատանջները համար այդպիսի մի օգնութիւն է ուղարկում: Եպիսկոպոսը գնաց. հայր Դամիանը Մոլոկայի կղզում բազդաւոր էր զգում իրան նրանով, որ միջոց կունենայ ծառայելու բորոտներին, որոնց Փրկիչը իր երկնային կեանքի ընթացքում այնքան սիրով ընդունում էր: Այն ժամանակ 1873 թւի Մայիսին հայր Դամիանը 38 տարեկան էր, ամուր, առողջ կազմուածքի տէր: Մոլոկայի կղզին, որ ընտրուած էր Հաւայի կառավարութեան կողմից ինչպէս բորոտների մի բնակավայր, իր ճոխ բուսականութիւնով և կլիմայով նմանում էր մի այնպիսի անկիւնի, որ կարծես նախասահմանուած էր միայն բազդաւոր մարդկանց համար: Կրկնու գլխաւոր տեղերը՝ Կալափաօ և Կալապաուպա տեղաւորուած էին դաշտավայրում, որոնք հարաւային կողմից ձգւում էին մինչև ծովը, իսկ հիւսիսից պաշտպանուած էին բարձր ժայռերով: Դրանք պարսպի նման բաժանում են այդ շերտի բնակիչներին կղզու մնացած մասից: 1873 թւին հայր Դամիանը այստեղ առաջին անգամ այցելեց բորոտներին: Որովհետև Հաւայի կառավարութիւնն առանց բացառութեան բոլոր հիւանդներին ուղարկում էր Մոլոկայի կղզին, ուստի թագուհու ազգականներից մէկն էլ նայն վիճակին դատապարտեց: Երբոր հայր Դամիանը ժամանեց կղզին, նրանց սարսափելի պայմանների մէջ գտաւ: Այնտեղ թագաւորում էր արբեցութիւն և լիովին անգործութիւն: Այդ նահատակները գիտէին, որ իրանց համար այլ ևս վերադարձ չկայ, որ իրանք մահաւան են դա-

տապարուած. հոգեկան կեանքը նրանց մէջ մարել էր: Մեղադրել կարելի չէ ոչ կառավարութեանը, ոչ էլ Սանդվիչեան կղզիների բնակիչներին, որ բորոտութեան երկիւղըն ստիպում է նրանց դիմել վերջին միջոցների՝ այսինքն բորոտութեամբ հիւանդացողներին գաղթեցնել, թէպէտ Հնդկաստանում ճանապարհորդող անգլիացիները պատմում են, որ այնտեղ այդպիսի վճռական միջոցների չեն դիմում: Ի պատիւ Հաւայի կառավարութեան պէտք է ասել, որ հայր Դամիանը ստանում էր այն բոլորը, ինչ որ պահանջում էր իր հօտի համար: Իւր անխնջ ջանքերով նա՝ կարելի է ասել, հրաշագործութեան հասաւ, որովհետև կրկնու հաստատեց կարգ և այնտեղ բնակւող նահատակների բարոյականութեան աստիճանը բարձրացրեց: Նրանց բնաւորութիւնը քիչ-քիչ փոխուում էր, իսկ նրա հետ միասին նրանք ձեռք էին բերում և հոգեկան հանգստութիւն: Հայր Դամիանը կղզին ժամանելով, այնտեղ գտաւ 800—1000 բորոտ: Մի շաբաթւայ ընթացքում նրանցից մեռնում էր 10-ից մինչև 12 մարդ, հէնց այդ քանակութեամբ էլ գալիս էին նոր հիւանդացողներ, որովհետև նրանց եւաւանդով փնտռում էին միւս կղզիներում, Մոլոկայի տանելու համար: Բերւած հիւանդների հանդիպումն արգէն կղզում գտնուող մերձաւորների հետ սրտաշարժ տեսարան էր ներկայացնում: Հայր Դամիանը յաճախ ասում էր. «Այս կղզին կենդանի մարդկանց գերեզմանատուն է»: Մոլոկայի գալուց, ինչպէս մենք արդէն վերը յիշեցինք, հայր Դամիանը հանդիպեց բոլորովին սանձարձակ կեանքի: Հիւանդները Կի անուկով (dracoena terminabilis) տեղական բոյսից լիկեօր էին պատրաստում, չափից դուրս խմում էին և այդ խմիչքը նրանց հասցնում էր խելացնորութեան: Նրանք հասան այն սարսափելի ճշմարտութեան, որ հաւայցիների լեզուում արտայայտուած է հինգ բառով — Aole

canavai ma keia vahi, այսինքն— այստեղ օրէնք գոյութիւն չունի: Այդպիսով հայր Դամիանի մաքուր հոգին ճնշեցաւ ոչ թէ միայն բորոտների ֆիզիքական տգեղութիւնից, այլ և նրանց սարսափելի անբարոյական գրութիւնից: Անառակութեան տեսարանները նրան կարող էին մարդկանց ծառայելուց յետ կանգնեցնել, որոնցից վաղ թէ ուշ պէտք է ինքն էլ վարակէր, բայց նա լցած Քրիստոսի սիրով, սառնասրտութեամբ վերաբերեց սպառնող վտանգին: Ի գուր չէ որ գոյութիւն ունի «Մեղքի բորոտութիւն» ոճը: Այդ հիւանդութիւնը մի անգամից չէ յայտնուում: Մէկի դէմքի գծագրութիւնն է փոխուում և նրան դարձնում է մի ինչ որ անձև մարմին, այնպէս որ մարդու պատկերը կորչում է: Իսկ միւսների ձեռների ու երեսի վրայ բացւում են սարսափելի խոցեր, որոնցից յետոյ թոյնը կամաց-կամաց թափանցում է մարմնի մնացեալ մասերը և վերջնականապէս ընկճում է մարդուն, դարձնելով նրան կենդանի դիակ. մի խօսքով՝ քայքայումը կատարւում է նախ քան գերեզմանը: Այդպիսի մաշող կերպով էլ մեղքն է մարդու հոգու վրայ ներգործում: Որպէս զի գաղափար տանք, թէ ինչպիսի մարդկանց մէջ էր շրջում հայր Դամիանը, բաւական է ասել, որ «այդտեղ թագաւորում էր ֆիզիքական և բարոյական չարիքը»: Բարութեամբ լցւած՝ նա աշխատեց ազդել հաւայցիների հոգու վրայ և հէնց այդտեղ երևան եկաւ նրանց բնաւորութեան բնածին մեղմութիւնը: Նրանք հեշտութեամբ ենթարկեցան նրա բարերար ազդեցութեանը և զբանով արտայայտեցին իրանց շնորհակալութիւնը անձնուրաց եկերին: Համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում հայր Դամիանին յաջողեց Կի անունով իմիչքից հրաժարեցնել նրանց: Հայր Դամիանն անխոնջ աշխատում էր նրանց ընտանեկան կեանքը բարւոքելու համար: Նրանք սկսեցին աշխատել, տեսնելով նրա մէջ աշխատանքի,

բի, եռանդի օրինակ և գործնական խելք: Սկզբում նրանց համար անհրաժեշտ էր շինել արձակ բնակարաններ, զբանել հարկաւոր քանակութեամբ ջուր, որ խիստ քիչ էր կղզու բնակիչների համար: Ձնորհիւ անձնական ջանքերի, նա գտաւ կղզում աւատ ջուր, որ ձեռք բերելու համար ձեռնարկեց և կատարեց շատ անհրաժեշտ աշխատանքներ: Իսկ երբ այդ գործը վերջացրեց, նա սկսեց երկու եկեղեցի կառուցանել: Սկզբներում Մոլոկայի կղզում ապրելիս, երբ բնակարանները նոր էին շինուում, հայր Դամիանը անց էր կացնում գիշերները Pandanus ծառի տակ, որտեղ և թաղւած է նա: Հաւայի կառավարութիւնը և հասարակութիւնը միշտ մեծահոգութեամբ էին վերաբերում դէպի թշուառները և այժմ էլ հայր Դամիանին ոչ մի բան չէին մերժում: Անհրաժեշտ աշխատանքները մասամբ նա ինքն էր կատարում: Այդ սարսափելի հիւանդութիւնը, ի հարկէ, անկարելի էր բժշկել. բայց հայր Դամիանի հոգացողութիւնով և ձեռնարկած միջոցներով հիւանդութեան մաշող ոյժը դադարեցրած էր. այդպիսով զգալի կերպով թեթևացրած էր տանջանքը: Հայր Դամիանը կարողացաւ մխիթարել տանջողներին, զարթեցնել նրանց մէջ հաւատ, յուսով լցնելով նրանց հոգիները: Կղզում ծառայելիս նա քրիստոնեայ դարձրեց շատերին և մասնակից եղաւ երկու հոգար բորոտների թաղման: Թշուառներից մի քանիսն այնպէս կապեցան միսիօնարի հետ, որ չէին համաձայնուի Մոլոկայից հեռանալ, որպէս զի չզրկէին նրա մխիթարանքներից. իսկ նրան՝ իրան ոչ մի երկրային առիթներ չէին կարող բորոտներից բաժանել: 1881 թիւն Ամերիկացի ճանապարհորդ Չարլ-Վատրէն Ստողգարտը իր բարեկամի հետ Մոլոկայի մտան: Ահա, ինչպէս է նկարագրում նա իւր տեսածը. «Գիւղի ծայրում մենք նկատեցինք մի խաչ. այդ մի մատուռ էր, որ բարձրանում էր գերեզմանատան միջից:

Ուրախ երեխաները մեզ համար բայց արին դէպի եկեղեցի տանող դռնակը: Նրանք բարեկեցին գլխարկները վերցնելով. ես միայն այդ միջոցին նկատեցի, որ նրանց փոքրիկ դէմքերն այլանդակաժ են խոցերով, սպիներով, իսկ շատերի ոտներն ու ձեռքերը արիւնաթաթախ էին և կորցրել էին իրանց սովորական տեսքը: Որովհետեւ նոր անձնաւորութիւնները բնակիչների համար հաղազիւտ բաներ էին, ուստի մենք շուտով շրջապատեցանք նրանցով. բայց այդ դէպքում թշւառները մեզ չէին մօտենում, այլ բաւական տարածութիւն հետու էին: Ուրբան ամբողջ շատանում էր, այնքան ես տեսնում էի աւելի սարսափելի դէմքեր և վերջապէս տեսայ այնպիսի թշւառներ, որոնք ներկայացնում էին աւերմունքի տեսարաններ, որ միայն մարդուն վրայ է հասնում գերեզմանում: Ամբողջ ուղեկցութեամբ, որ հետեւում էր մեզ հեռից, հասանք եկեղեցի. դուռը բացեց և եկեղեցու աստիճանների վերը մեզ դիմաւորեց երիտասարդ քահանայն: Նրա վերարկուն խիստ մաշած էր, մազերը փոքր ինչ գզգզած, ձեռքերը կոշա — բանւորի ձեռքեր: Նա երիտասարդ էր, առողջ և եռանդոտ: Նրա ուրախ ծիծաղի և սիրալիք վարմունքի մէջ նկատում էր մի այնպիսի մարդու ոյժ, որ յանձն էր առել կատարելու մի մեծ, ազնիւ գործ: Ինքնայօժար մեծնակեացը վարակած բորոտների մէջ տակաւին ինքն առողջ էր: Հայր Դամիանը մեզ՝ հիւրերիս ընդունեց իր համեստ բնակարանում և առաջարկեց սեղանակից լինել իրան: Նա իր համար ինքն էր կերակուր պատրաստում, միայն օգնում էր նրան մի տեղացի մարդ, որ դեռ չէր վարակել: Նրա դուռը երբէք չէր փակւում բորոտների առաջ, և գրանով է բացատրւում նրա ազդեցութիւնը բնակիչների վրայ: Երբ հայր Դամիանը առաջին անգամ կղզի եկաւ, գրանը կապը կտրած մարդիկ էին. իսկ վերջը նրանց

դարձրեց իրան հնազանդ զաւակներ: Նա յաճախ կրկնում էր.— Ինձ խղճում են, իսկ ես բոլոր միսիօնարներից բողոքաւորն եմ:

Պարոն Ստողգարտը և նրա ընկերը միսիօնարին համոզեցին և մասնակից արին իրանց հետ բերած պաշարին: Հայր Դամիանն էլ իր կողմից եկտրներին պարտաւոր չբմնաց: Ճանապարհորդները տեսան, ինչպէս միսիօնարի ձայնի վրայ հաւաքեցան մեծ քանակութեամբ հաւեր, որոնց նա զուարճութեան համար էր պահում: Գնալիս, նրանց մի զոյգ հաւ ընծայեց: Կիրակի և տօն օրերը հայր Դամիանը պատարագ էր անում Կալավայում, յետոյ գնում էր Կալապատուպա, երկրորդ պատարագն անելու: Օրւայ ընթացքում նա սովորեցնում էր կրօնի վարդապետութիւնը, Սուրբ Գիրքը, և միայն գիշերը տուն վերադառնալով իր համար կերակուր էր պատրաստում: Փափուկ ձեռքով նա գիպչում էր ֆիզիքական և հոգեկան վէրքերին: Նա և՛ դատաւոր էր, և՛ ուսուցիչ, ատաղձագործ, այգեպան, և երբեմնապէս էլ գերեզմանափոր: Նրա համար դժւար արհեստ չկար, նա լիովին իրան զոհում էր ամեն բանի համար: Այդպէս էր հայր Դամիանը, երբ նա առողջ էր: Իսկ երբ նրան էլ զիպաւ այդ հիւանդութիւնը, նա դարձեալ շարունակում էր աշխատել և աշխատում էր մինչև իր կեանքի վերջը: Ստողգարտը շարունակում է. «Ցականալով, որ ես ներկայ լինիմ պատարագին, հայր Դամիանը ուղեկցեց ինձ և կանգնեցրեց եկեղեցում՝ վանդակի ետև, որին բորոտներից ոչ մէկը չէր մօտենում: Երբող երեխաները, որոնց այնտեղ նորից տեսայ, բոլորն այլանդակաժ էին: Ամենայն հեղութեամբ կենդրոնացած, սեղանի սպասաւորն արտասանում էր ազօթքները: Հնչում էր սրբազան երգեցողութիւնը, բայց երբ նայեցի մի քանի դէմքերի վրայ, ինձ սարսափ տիրեց: Միթէ այդ մարդիկ կենդանի

ենն և ոչ գերեզմանից դուրս եկած: Եւ ես յիշեցի Ղուկաս Աւետարանչի խօսքերը: Այդ մարդիկն էլ, մտածում էի ես, դիմում են Աստուծուն և նա էլ չէ գրկել Իր ողորմութիւնից, ուղարկելով նրանց համար միսիթարիչ հայր Դամիանին: Բացի հայր Դամիանից ոչ ոք չէր դիպչում եկեղեցական անօթներին: Ինչ կերպ և որ բուպէումն է փոխուում բորոտութիւնը, դժար է որոշել, ուստի և երկար դարմանում էին այն հրաշքի վրայ, որ հայր Դամիանը առանց վարակելու տասն և երեք տարի սպրեց կղզում: Չերջապէս բորոտութեամբ հիւանդացաւ նա և զբանով էլ մեռաւ վերջ զնելով իր երկրաւոր ասպարէզին»:

Մէկ անգամ թագուհին—Սանգվիչեան կղզիների ըզգենտուհին—ցանկացաւ այցելել իր թշուաւ ազգականուհուն: Նրան սաստիկ այլանդակաւ տեսնելով, թագուհին հեկեկաց, բայց բորոտն աշխատում էր հանգստացնել թագուհուն, միսիթարում էր նրան, ասելով որ ինքն այնքան էլ անբազզ չէ և երբէք չէր ցանկանայ թողնել այդ տեղը, ուր որ եկել էր լցւած զզուանքով: Նոյնը միւս բորոտներն էլ էին կրկնում: Թագուհին մինչև սրտի խորքը շարժւած, վերադարձից յետ, հայր Դամիանին գրեց զգացւած մի նամակ, որտեղ նրան շնորհակալութիւն էր յայտնում նրա անսահման զթութեան համար: «Ես գիտեմ—գրում էր նա—գուր պարզների կարօտ չէք և այն սպասում էք միայն Ամենակարողից, Որ առաջնորդում է մեզ: Բայց անձնական համակրութիւնից զբզակած՝ գրաւմունքով ցանկանում եմ տալ ձեզ Կալաւոյի ասպետական, թագաւորական պարզեր իբրև նշան իմ անկեղծ յարգանքի ձեր ծառայութեան համար, որովհետև գուր կարողացաք միսիթարել իմ հպատակներից ամենաթշուառներին...»: Ապա հետևում էր ստորագրութիւնը.

Ձեր բարեկամ—Լիլիպոկալանի ըզգենտուհի»:

Հայր Դամիանի Մոլոկայի կղզում մի քանի տարիներ անխոնջ գործունէութիւնից յետոյ կղզին սակաւ այցելողները կարող էին մեծ փոփոխութիւն տեսնել զէպի լաւը, որ ձեռք էր բերել միսիօնարն իր ջանքով: Դամիան միսիօնարի անունը հարկւրաւոր բերաններ սկսեցին տարածել աշխարհի հեռաւոր կողմերը: Այն ինչ նա չգիտէր՝ ինչ որ իր մասին պատմւում էր և համեստութեամբ շարունակում էր իր անձնւէր գործունէութիւնը, մտածելով որ միայն իր պարտքն է կատարում: Բայց և այնպէս՝ ինչ չափով մանրամասնութիւններ էր իմացւում նրա մասին, այնքան էլ մեծանում էր հետաքրքրութիւնը զէպի այդ դարմանալի, բացառիկ անձնաւորութիւնը: Այս վայրկեանին երբ գրում ենք սոյն տողերը, ամբողջ Անգլիան զբաղւած է այդ համեստ միսիօնարով և յարգանքի արժանաւոր վարձ է տալիս Կաթոլիկ-Օտար երկրացուն:

Լոնդոնի Կարեթփելեան չքաւոր ծխականների յարգելի Չապման քահանան առաջինը եղաւ, որ պատմեց իր ծխականներին, թէ հայր Դամիանը իր անձով ինչպիսի օրինակ է ներկայացնում բոլոր քրիստոնեայ աշխարհին: Յետոյ նա հրաւէր կարգաց իր ծխականներին նւիրաբերութիւններով միանալ հայր Դամիանի զթասիրտ գործերին, նրան միջոցներ տալու կատարել այն բոլորը, ինչ որ վերաբերում էր բորոտներին և ինչ որ կթելադրէ նրա սրտանց կենդանի մասնակցութիւնը զէպի այս բորոտները: Այդ հրաւէրն ընդունեցին ջերմօրէն և մի շարաթւայ ընթացքում, նայելով այդ ծուխի չքաւորութեանը, մեծ գումար ժողովեցին՝ 650 ֆ. ստերլինգ:

Յանկանալով այդ փողը շուտափոյթ ուղարկել, ուր որ հարկաւոր էր, Չապմանը ծխականներին հետեեալ նամակը գրեց. «Հաղորդում եմ ձեզ, որ ժողովւած է 650 ֆ. ստերլինգ: Ես այդ ստորագրութիւնը շարաթ օրը գաղարե-

ցնում եմ: Ընտրահալ եմ ձեզնից ժողոված գումարի համար: Մենք բազմ ունինք այդ ընծան սուրբ մարդուն ուղարկել: Մի ըստ է անգամ կասկածել նրա զթասարտութեան, սրբութեան վրայ, ես անկարելի եմ համարում: Նրա կեանքը ուղիղ պարսաւանք է մեր քնքշութեանը և արժանի յանդիմանութիւն մեր ետականութեանը:

«Ես մեծ պատիւ եմ համարում այդ մեծանձն մարդուն ուղարկել մեր զէպի նա ունեցած յարգանքի այս փոքրիկ տուրքը»:

1885 թականի վերջին ասն ինչ է գրում հայր Գամիանը.

«Հէնց իմանաս ինքս վարակած եմ այդ սարսափելի հիւանդութիւնով, ես անկարող եմ այլ ևս Գոնդուլու գրնալ, որովհետեւ ես էլ բորոտ եմ: Բորոտութեան միկրոքները հաստատապէս տեղաւորել են ձախ սպրումս և նոյնպէս ականջումս: Ունքերիցս մէկն արդէն ոչնչացել է, շուտով ես էլ այլանդակած կլինիմ: Այն օրից, երբ համոզւեցայ, որ հիւանդ եմ, ես մի առանձին անդորրութիւն եմ վայելում, ինձ աւելի քան երջանիկ եմ զգում, յանձնում եմ ինձ Աստուծոյ կամքին: Նա աւելի լաւ զիտէ, թէ ինչ է հարկաւոր իմ փրկութեան համար: Աստուած մեզ աւելի է սիրում, քան մենք ընդունակ ենք մեզ սիրել, և ես խոր համոզւած այդ բանում, բացականում եմ. «Թող լինի Քո կամքը»:

«Ազոթեցէք ձեր հիւանդ բարեկամի համար: Ինձ և իմ հիւանդ ժողովուրդը, յանձնում եմ ձեր՝ Աստուծուն սպասաւորողների ազոթքներին»: Այդ ժամանակներում հայր Գամիանը նամակ ստացաւ Չապման քահանայից: Անն թէ ինչպիսի խօսքերով պատասխանեց միսիօնարը այն «բացառիկ զրութեան մասին, որի մէջ նրան Աստուած գրել էր»:

«Գ. Բ. Չապմանին:

Լոնդոն: Սուրբ Դուկաս եկեղեցու քահանային:
Կոլովա-Մոլոկայի (Սանդվիչեան կղզիներ)

1886 թ. Օգոստոսի 26:

Թանկագին կարգակից, հէնց այս ըստ էիս ստացայ ձեր Յունիսի 20-ից գրած համակրական նամակը: Փրկիչը ցանկացել է քահանայի միջնորդութեամբ, որ իր հասարակ պարտքն է կատարում, բոցավառել Ձեր հոգին և համակրութիւն ներշնչել զէպի անձնագոհ, խաղաղ կեանքը: Գուր ճշմարիտ էք ասում Ձեր նամակում, որ Ս. Հաղորդութեան խորհուրդը մեզ ոյժ է տալիս, և մինչև անգամ մեզ հասցնում է մարդկային ցանկութիւններից հրաժարելու աստիճանին: Չլինէր այն համոզմունքը, թէ Աստուած աներեւոյթապէս ներկայ է տաճարում, ես մինչև վերջ հաստատուն չէի մնայ իմ վճռի մէջ—բազմակից և կենակից լինել բորոտներին Մոլոկայիում: Նշանները ցոյց են տալիս, որ այդ վճռութեան հետևանքներն արդէն երևան են գալիս: Բայց որովհետեւ Սուրբ Հաղորդութիւնը քահանայի ամենօրեայ հայն է, ուստի ես բազմաւոր, բաւական և հանդիստ եմ այն բացառիկ զրութեամբ, որի մէջ լինելու հաճելի էր նախախնամութեան:

Յանկանում եմ հաղորդել Ձեզ, թէ ինչ արեց մի ամերիկացի:

Ընդունելով կաթոլիկութիւն, նա նախ՝ առանձնացաւ վանքում և յետոյ՝ անձնագոհ հոգւով եկաւ նա մեր հեռու՝ աղքատ երկիրը, բնակուելու մտքով: Նա այդ վճիռը ստացաւ տեղական կառավարութիւնից և ինչպէս եղբայր ասլոնում է ինձ հետ, մասնակցելով աշխատանքներին—ծառայելով բորոտներին: Նա էլ նոյնպէս Սուրբ Հաղորդութեան մէջ գտնում է մխիթարութիւն և զօրութիւն:

ես հաւատացած եմ, որ մի այդպիսի ընկեր ունենալս դուք կհամարէք մի Աստուածային գլխութիւն. ես էլ կազօթեմ Ձեզ և Ձեր բոլորիդ համար. հաւատը լինի մի, որ մենք բոլորս պատկանենք մի ընդհանրական եկեղեցուն և որ բոլորս լինինք ի մի Յիսուս Քրիստոս: Գալով Ձեր բորոտների համար ուղարկած լուծային՝ կասեմ Ձեզ, որ նրանք 600 հոգի են, որոնց համար ամենափոքր օգնականութիւնն անգամ բարեբարութիւն է:

Իսկ ինչ իմ անձին է վերաբերում, ես խոստում եմ տուել միշտ չքատը մնալ. ինձ ոչինչ հարկաւոր չէ: Թճղ լինի Աստուծոյ յաւիտենական օրհնութիւնը ձեր, ձեր ընտանիքի և այն բոլոր մարդկանց վրայ, որոնք ինձ օգնում են թեթեւացնել իմ թշուառ, հիւանդ ժողովրդի գրութիւնը:

Սիրող ձեզ ՚ի Քրիստոս
Ժ. Դամիան Գէ-Վէյստէր:

Այդպիսի նամակը բացատրութիւնների կարօտ չէ, մի և նոյն ժամանակ այդ նամակի պատասխանն էլ պակաս ուշադրութեան և յարգանքի արժանի չէ.

«Հայր Դամիանին:

Լոնդոն: Կեմդին Գրով-Նորս:

Պեկզամ 1886 թ. Գեկտեմբերի 1:

Հնորհակալ եմ Օգոստոսի 26-ին գրած Ձեր սիրալիր նամակի համար, բայց աւելի շնորհակալ եմ Ձեր ազօթքների համար, որ անում էք ինձ և ինձ չըջապատողների համար: Ուղարկում եմ մի գումար, որ ինձ աւել են բարի քրիստոնեաները Ձեզ յանձնելու: Նրանք խնդրեցին հագորդել Ձեզ, թէ որքան զօրեղ է ազգել Ձեր կեանքի օրինակը նրանց վրայ և օգնել է նրանց տանել իրանց սեպհական կեանքի ծանրութիւնները: Նրանք հասկացան անձ-

նագոհութեան մեծագործութիւնը յանուն զօրացնող Քրիստոսի և Նրա սիրոյ... Նրանք յուսով են, որ օգնելով Ձեր թշուառ ժողովրդին, Ձեզ համար հաճելի գործ կկատարեն, ուստի խնդրում են Ձեզ կարգադրել նւիրած գումարները լիովին Ձեր բարեհայեցողութեան համեմատ: Նրանք սըրտանց և յարգանքով ողջունում են Ձեզ: Համողած եմ, որ Ձեզ վիճակած պակը նոյնքան պայծառ է, որչափ սարսափելի են Ձեր մարմնաւոր տանջանքները: Ինչ որ Ձեզ գրում եմ, այն զգացմունքների արտայայտութիւններն են, որ տածում են դէպի Ձեզ բոլորը, առանց բացառութեան — զանազան դաւանութիւնների, ազգութիւնների — հասարակական գիրք ունեցող և զանազան հասակի մարդիկ: Դուք յաղթեցիք բոլորի սրտերը: Մաքով միանում եմ նրանց հետ: Կկատարեմ բոլորը, ինչ որ կարող եմ, որպէսզի Մոլոկայի կղզում տանջողներին թեթեւութիւն տամ: Ներկայ նամակում արտայայտում եմ այն զգացմունքները, որ յանձն եմ աւել Ձեզ հաղորդել — Ձեզ սիրում են, Ձեզ գնահատում են: Ձեր ընկերոջը յայտնեցէք բարեկամական ողջոյնս: Ուրախ եմ, որ նա Ձեզ հետ է: Նրա տեղ շնորհակալութիւն եմ յայտնում Աստուծուն այն կեանքի համար, որ նա ընտրել է, գիտենալով հանդերձ՝ իւր անձնական փորձով, որ ներկայ անձնագոհութիւնը հազուադիւր բան է: Ձեզ սպասող երջանկութիւնը Ձեզ ոյժ է տալիս տանելու Ձեր Խաչը և համբերել այն տանջանքներին, որ պատճառում է բորոտութեան հիւանդութիւնը: Կրկին մնաք բարև: Թճղ մեր սիրոյ նւէրը հեռաւոր Անգլիայից՝ Ձեզ յիշեցնի այն սրտերի մասին, որոնք լի են յոյսով — Ձեզ երկնքում տեսնել:

Ազօթեցէք այն մարդկանց համար, որոնք յանձնած են ինձ և նոյնպէս Ձեզ սիրող բարեկամ

Գուգօ Բ. Չապմանի համար:

Ք. Տ. Բիշոպ և ընկերութեան զբառենեակի միջոցով ուղարկում եմ Գոնորուլու 950 ֆ. ստերլինգ արժողութեամբ մի շեկ (24,375 ֆր.), ուր և կուղարկեմ մնացեալ ուղարկելիքները: Զապմանը չբաւականացու իր ծխականների մէջ արած հանգանակութիւնով, այլ «Թայմզի» խմբագրին ուղղած նամակի միջոցով գիմեց հասարակութեանը, ուր յայտնում էր այն բոլորը, ինչ որ մենք գիտենք հայր Դամիանի անձնագոհութեան մասին: «Թայմզի» բաժանորդները ձայնակցեցին այդ հրաւէրին իրանց առատ նւէրներով: Հայր Դամիանը անձամբ երեք հարիւրից աւելի տուն շինեց և երկու եկեղեցի: Նրան մեծ մխիթարութիւն պատճառեցին երկու վանականներ և երեք գլխութեան քոյրեր, որոնք եկել էին նրա հետ մասնակից լինելու վտանգին և դժուարութեան: Մինչև անգամ, կարելի է ասել, հէնց այդ էր զրանց կոչումը, բայց երբ զինւորները մի բացառիկ քաջութիւն են ցոյց տալիս, այն ժամանակ հայրենիքը պարծենում է նրանցով: Քրիստոնեաների շարքում իսկ ունենալով այդպիսի մարդիկ, մենք էլ կարող ենք նրանցով համարձակ պարծենալ, և ինքներս խոնարհուել նոցա առաջ:

Զապմանը միջոց ունենալով դարձալ նպատ ուղարկել Մոլոկայի կղզի, հայր Դամիանին գրեց մի նոր սրտաշարժ նամակ.

«Թանկագին հայր.

Ուղարկում եմ հագար ֆ. ստ. (25,000 ֆր.)

Այդ փողը Ձեզ ուղարկում են մի քանի քրիստոնեաներ, որոնք շնորհակալութիւն են յայտնում Աստծուն անձնագոհութեան այն օրինակի համար, որ Գուր նրանց ցոյց տեցիր: Դրանով Գուր ինձ երախտապարտ չէք, ես միայն յանձնում եմ այն, ինչ որ Ձեզ համար ստացել եմ: Ես ար-

դէն յարգած եմ նրանով, որ հնարաւորութիւն ունիմ յայտնել Ձեզ իմ խորին յարգանքի զգացմունքը: Կարգադրեցէք այդ գումարը Ձեր ցանկութեան համեմատ: Զուտով կուղարկեմ Ձեզ դարձեալ 300 ֆ. ստ.: Խնդրում եմ ձեզ, աղօթեցէք ինձ համար, որպէսզի ես էլ ներշնչւիմ, գոնէ փոքր չափով, այն անձնագոհութեամբ, որով Գուր լի էք, իսկ ես ամենևին չունիմ: Ես կցանկանայի առաջարկել Ձեզ իմ ծառայութիւնը, բայց կարծում եմ՝ Աստծուն ցանկալի է, որ ես մնամ ինձ շրջապատող չբաւորների մէջ: Նրանցից մի քանիսը զրկած են ամեն բանից, իսկ ես էլ ամենևին միջոց չունիմ նրանց օգնելու, բայց և այնպէս՝ նրանց թողնել չեմ վստահանում, եթէ ոչ՝ կգալի խնամել Ձեզ մինչև այն բուպէն, երբ Ձեզ համար կհասնի յաւիտենականութիւն հեռանալու ժամը: Վաղեմի թանկագին բարեկամ Կլիֆօրդին հաղորդեցէք ջերմ ողջոյնս: Նախանձում եմ նրան: Ես յոյս չունիմ, որ կարող կլինիմ Ձեզ այցելել դարնանը փող չունենալու պատճառով. բայց մենք ամեն տեսակ հանգամանքներում լինինք ուրախ և բաւական: Թո՛ղ Աստած Ձեզ մխիթարէ այն մտքով, որ Գուր շատերին սովորեցրիք սիրել նրա խաչը: Չնայելով որ ես չեմ պատկանում կաթոլիկ դաւանութեանը, բայց և ոչինչ ինձ խանգարել կարող չէ պատկառանքով խոնարհելի այդպիսի մի մեծ ծառայութեան առաջ:

Թո՛ղ ասէք ինձ կոչել Ձեզ սիրող բարեկամ՝

Բ. Զապմանն:

1887 թ. Նոյեմբեր ամսին Եւրոպայում տարածեց հայր Դամիանի մահուան լուրը: Իբրև հերքումն այդ լրի ստույթեան, բերում ենք կտորներ հայր Դամիանի նամակից. «Աստուած տակաւին ինձ չէ կանչել վշտի աշխարհից և յայտնի չէ, թէ մինչև երբ պիտի սպրկեմ, այն ինչ հա-

մարեա ոչ որին հարկաւոր չեմ: Ինչպէս դուք գիտէք վա-
ղուց, նախախնամութեանը ցանկալի էր ուղարկել ինձ հա-
մար այն սարսափելի հիւանդութիւնը, որի պատճառով
յուսով եմ յաւէտ փառարանել Աստուծուն այնպիսի ողոր-
մութեան համար, որ տանում է շուտ և ուղիղ ճանա-
պարհով դէպի թանկագին հայրենիք— յաւիտենականու-
թիւն: Թէպէտ բորոտութիւնը բաւական զօրեղ կերպով
ազդել է ինձ վրայ և այլանդակել է երեսիս մի մասը,
բայց և այնպէս տակաւին զգում եմ մէջս ոյժ և ոտքերիս
սարսափելի ցանն անյայտացել է: Փառք Աստուծոյ, մինչև
հիմա ձեռքերս հիւանդութիւնից ազատեն, ես ամենայն
օր պատարագ եմ մատուցանում և այդ ինձ համար մեծ
մխիթարութիւն է: Աղօթեցէք ոչ թէ միայն մարմնական այլ
և բարոյական բորոտները համար, որոնք մեր մէջ բազմա-
թիւ են: Չար հօգին մոլորեցնում է նրանց Մորմոնների
ամեն տեսակ անբարոյականութիւնով և սարսափելի դժ-
ւար է սանձահարել նրանց, որոնք ենթակայ են այդ պա-
կասութեանը»:

Միւս նամակում, որ գրել է 1887 թ. նոյեմբ. 16-ին
նա յայտնում է. «Ձատ գործ ունենալուս համար ժամանա-
կը արագ է, անցնում և այն ուրախութիւնը, որով Աստուծ
լցնում է սիրաս, դարձնում է ինձ մխիթանարներից ամե-
նից բաղդաւորը: Երևի Աստուծ Իր բարի նպատակների և
յօգուտ իմ հօգու ուղարկեց ինձ այս հիւանդութիւնը»: Այդ
ուրախութիւնը այս աշխարհի ուրախութիւն չէ— և հայր
Դամիանը, կարծես «տեսնելով Անտեսանելուն», զգում էր
իրան միացած Աստուծու հետ: Նամակը, որի մասին այժմ
խօսում ենք, վերջանում էր հետեւալ խօսքերով. «Ցտեսու-
թիւն երկնքում»: Հայր Դամիանի անունը ամբողջ քրիս-
տոնեայ աշխարհի սեպհականութիւն է դարձել: Չնայելով
նրա համեստութեանը, նրա բարեբարոյութեանը, ինչպէս

լուսատու կերոն, մատնից մենակեացին, համարեա թէ նրա
գերբնական ծառայութիւնները գրաւեցին դէպի նա այնպի-
սի մարդկանց, որոնք նրան չէին ճանաչում. մինչև անգամ
նա բարձրացրեց մտքեր, ոգևորեց սրտեր: Այդպէս էր նրա
ազդեցութիւնը և Կլիֆօրդի վրայ: Կլիֆօրդը գեղարւեստի
ստեղծագործութիւններով կլանւած մի նկարիչ էր: Բայց
հասաւ մի ժամանակ, երբ նա ամենից բարձր դասեց բա-
րոյական գեղեցկութիւնը, հրաժարեց իր սովորութիւննե-
րից, կենցաղավարութեան յայտնի կանոններից, զարճու-
թիւններից ու պարագմունքներից և գնաց հայր Դամիա-
նի մօտ:

Հէնց որ Կլիֆօրդը վճռեց գնալ Սանդվիչեան կղզի-
ները և այդ լուրը տարածուեցաւ, շատերն սկսեցին տալ
նրան զանազան առարկաներ հայր Դամիանին յանձնելու,
միայն որ նա ինքը բաժանէր էր իր ցանկութեան համեմատ:

Կլիֆօրդը քաջալերւած ընդհանուրի համակրութեամբ
և վերցնելով իր հետ բորոտների օգտին ընծայաբերւած
իւրը, նա լողաց նաւով 1888 թ. Գոնոլուլու, իսկ այնտե-
ղից Մորկայի և վերջապէս՝ տեսաւ նրան, ում մօտ դիմում
էր այնքան հեռաւոր տեղից: Լոնդոնում հրատարակել է
Կլիֆօրդի գիրքը, որտեղ նա նկարագրում է Սանդվիչեան
կղզիներում եղած ժամանակայ տպաւորութիւնները: Հա-
ղորդում ենք նրա՝ 1889 թ. Յունւարի 26-ին Մորկայից
գրած նամակներից կտորներ.

«Տարօրինակ կղզի է... նրա սարերն ու ձորերը գե-
ղեցիկ են. խորհրդաւոր և սարսափելի են նրա հրաբուխ-
ները, ինչպէս և նրա բնակիչների հիւանդութիւնը... Օդը
թարմ, հրապուրիչ է, ծովը կապուտակ. թշւառ բորոտնե-
րը կարծես թէ այտեղ բաղդաւոր են: Ինձ համար այս-
տեղ ամեն բան նոր է, ամենը սարսափելի է: Ինձ թւում է,
որ այստեղը գժոխք է և շատ հանգամանքներում այդ ու-

ղիղ է: Այն ինչ՝ ինքս ինձ հարց եմ տալիս, արդեօք այս տեղ մի այնպիսի զուարճութիւն չկայ, որ մի այլ տեղ չես գտնի: Ես համոզուեցայ, որ շատերը չէին ցանկանայ առողջանալ, եթէ այդ դէպքում պէտք լինէր այստեղից հեռանալ: Նրանք միշտ խիստ չեն տանջուում, կեանքն այստեղ թեթեւ է, և շնայելով դրան, այդ կեանքից աւելի սարսափելի բան չկայ. . .

«Հայր Դամիանը հէնց այնպէս է, ինչպէս երեակայում էի նրան: Նրան հեշտ կարելի է սիրել և յարգել: Նրա մէջ այն մտածողութեան նշոյլն անգամ չկայ, թէ ինքը նահատակ է կամ սուրբ: Նա երբէք չէ մտածում իր մասին: Միշտ բարի, ուրախ, սիրալիր, պարզ, զարմանալի աշխատող է, նա կ'ատաղձագործ է, կ'քարտաշ է, կ'ճարտարապետ, կ'հաշւապահ. . . . Բորոտութիւնը նրա վրայ խիստ է ազդել. իւրը մի փոքր օգնում է, ճակատի ուռուցքը կարծես թէ քշացել է, շնչարգելութիւնը նրան զիշերնեքը առաջանից սակաւ է տանջում: Փառք և գոհութիւն Աստուծուն: Հայր Դամիանին ներկայումս օգնում են երկու քահանայ և երեք զթուլթեան քոյրեր»: Մի քանի օրից յետոյ Կլիֆօրդը գրում է. «Ինձ թւում է, որ հայր Դամիանը աւելի թեթեւութիւն է զգում. նա պատարագի ժամանակ երգում էր, որ չէր կարողանում անել մի քանի ամիս շարունակ: Նա միշտ բաղդաւոր մարդու տեսք ունի, այն ինչ չէ կարելի երեակայել, թէ ինչպիսի տանջանք է հոգու ու նետարգերի համար մօտ լինել բորոտներին և 'ի վերայ այսր ամենայնի անընդհատ աշխատել: Երեք զթուլթեան քոյրերը ևս անվրդով, հեղ և բարեհոգի են: Մարիամ—Աննա մայրիկի գեղարւեստական ճաշակը խիստ զարգացած է»: Մի քանի մանրամասնութիւններ, որոնց մասին Կլիֆօրդը շարունակում է պատմել, նա տպագրեց վերադարձից յետ: Մենք տեսանք, որ հայր Դամիանը շնորհակալութեամբ ըն-

դունում էր բոլորը, ինչ որ համակրելով նրան ուղարկում էր թեթեւացնելու բորոտներին, բայց նա չէր սիրում, որ ուշադրութիւն դարձնէին իր վրայ, և համեստօրէն խոյս էր տալիս այդ բանից, նոյն իսկ մատաղ հասակից սկսած:

Մենք կարգում ենք նրա 1876 թ. մօրը գրած նամակում, երբ դեռ նրա մասին համեմատաբար քիչ գիտէին և խօսում էին աւելի սակաւ.

«Թանկագին մայր և եղբայրներ, ներեցէք որ դեռ ևս 2եր Մայիսի 10-ից գրած նամակի պատասխանը չեմ գրել: Նախ ես սպասում էի Պամֆիլի եղբօրս նամակին, երկրորդ՝ ինձ համար անախորժ էր, որ ձեզ գրած նամակս տպագրւած է: Ընդմիշտ թոյլ տուէք ինձ ասել, որ այդ բանը չեմ սիրում: Ես ցանկանում եմ անյայտ մնալ, բայց շնորհիւ այդ նամակների իմ մասին մինչև անգամ Ամերիկայումն են խօսում»:

Հասկանալի է, որ մայրը նրա բացակայութեան ժամանակ միխթարութիւն էր գտնում խօսել նրա վրայ և նրա գործի մասին: Պամֆիլի եղբայրն էլ մասնակից էր մօր զգացմունքներին: Միսիօնար դառնալու միտքը Պամֆիլիին չյաջողեց: Նա իր վանքից հետևում էր եղբօր գործունէութեանը, փառարանելով Նախախնամութեանը, որ ուղարկեց իրան այդպիսի փոխարինող: Այդ ընտանիքի մէջ անձնագոհութիւնն ընդհանուր յատկութիւն է: Սակայն երբ թշւառ մայրն իմացաւ, որ իր որդին հիւանդացել է բորոտութիւնով, նա այդ չկարողացաւ տանել և նրանից առաջ մեռաւ: Մօր մահը հայր Դամիանի վերջին երկրային վիշտը եղաւ, բայց և որը միացաւ այն ուրախութեան յոյսին, թէ կտեսակցի մօր հետ, աչքի առաջ ունենալով իր սեպհական շուտափոյթ մահը: Ահա դարձեալ քաղուածքներ պ. Կլիֆօրդի օրագրից. «Երբ բժիշկը համոզուեցաւ, որ նրանում յայտնւել են բորոտութեան առաջին նշանները,

նա չվստահացաւ յայտնել այդ հայր Դամիանին, վախենալով վշտացնել նրան: «Նս միշտ այդ սպասում էի, ասաց հիւանդը. ինքս էլ վաղուց նկատել եմ, որ ես ևս վարակւած եմ»

Մի կին գրում է, որ հայր Դամիանը զգում է մի այնպիսի առանձին ուրախութիւն, որ ոչ որ նրանից խրելի չէ կարող: Իմանալով այդ բանի մասին, նա ժպտալով ինձ ասաց. «Այդ ճշմարիտ է, ես զգում եմ այդպիսի մի ուրախութիւն»:

«Նս նկարում էի նրա պատկերը. նա այդ միջոցին ականջ էր դնում սաղմոս-երգողներին, ուստի և նրա հայեացքը արտայայտում էր համեստալիք ուրախութիւն: Երբ ես վերջացրի պատկերը, նա նայեց և ասաց. «Ի՛նչ այլանդակութիւն, ես չգիտէի, որ հիւանդութիւնս արդէն այդպէս դարգացել է»:

«Հայր Դամիանը հարցուփորձ էր անում ինձ 2ապամանի մասին, որ նրան օգնում էր հեռւից՝ միշտ և մեծահոգութեամբ:

«Մոլոկայում եղած ժամանակ ես ապրում էի հիւրանոցում, և հայր Դամիանը վախենալով այդ ախտը տարածելուց, ոչ մի անգամ չմտաւ այնտեղ: Երեկոները նա նստում էր սանդուխի աստիճանի վրայ և հաճոյքով խօսում էր ինձ հետ իրան յատուկ գիւրալի կենդանութեամբ: Հայր Դամիանը և երկու քահանան բորոտների հետ ապրում են ամենալաւ յարաբերութիւնների մէջ, և այդ յարաբերութիւններն այնպէս մօտ են, որ նրանք իբրև մարդ չեն կարող չվարակել բորոտներից: Բորոտները գեղեցիկ են երգում. նրանցից մէկն ունի հիանալի բարիտոն և նրան ձայնակցում է մի երեխայի զուարթ, հնչող ձայնը: Մի կին, որ Գոնոլուում եղել է հիանալի երաժշտուհի, կարող եղաւ նւագել իր այլանդակած ձեռքերով հարմունիու-

մի վրայ. նրանք երգեցին լատիներէն, «Adeste fideles» իսկ յետոյ «Բորոտների երգը», որ իմ տրամագրութիւնը խանգարեց: Այդ երգը հաւայցի պոէտի շարագրածն է. . . Քրիստոսի ծննդեան օրը հայր Դամիանին յանձնեցի Փաբէլի «Օրհներգներ» գրքի մի օրինակը, որ տւել էին ինձ նրա համար լեզի Հրոսովինոբի երեխաները: Նա մի քանի անգամ կարգաց մանկական ձեռագրով գծագրած հետեւալ բառերը: «Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն կգանեն», և դրան աւելացրեց—«Նս յաճախ կգործածեմ այս գիրքը, որ ինձ համար թանգ է»: Նա մի առանձին սէր է տածում դէպի երեխաները: Զատ անգամ ես տալիս էի նրանց անունները, որոնք բերանացի խընդրել էին հաղորդել իրանց զգացմունքը կամ նրան ընծաներ էին ուղարկել: Նա հարցնում էր իւրաքանչիւրի մասին, զգացած էր երևում որ այդքան շատ բողոքականներ և անգլիացիներ արտայայտում են իրանց սէրը դէպի նա: Վերջին կիրակին, որ ես անցկացրի բորոտների մէջ, նրանց մոգական լապտերով պատկերներ էի ցոյց տալիս: Հայր Դամիանը բացատրում էր պատկերների նշանակութիւնը, որոնք բոլորը վերցրած էին Քրիստոսի կեանքից: 2էր կարելի առանց խոր զգացելու տեսնել, թէ ինչպէս այդ մահւան դատապարտած ամբոխը լսում էր Փրկչի կատարած հրաշալի բժշկութիւնների, նրա Խաչի, տանջանքների, մահւան և յարութեան մասին: Հայր Դամիանը ինձ պատմում էր, որ շատերը ցոյց են տալիս խորին հաւատի զգացմունք»:

Կլիֆօրդի Լոնդոնից բերած այդ մոգական լապտերը, 'ի թիւս այլ իրերի, ուղարկել էր լեզի Կարոլին 2արտերիսը: Բացի գրանից՝ նա ուղարկել էր մի երգեսոն 40 գանազան պիեսաներով, որ մեծ բաւականութիւն էր պատճառում բնակիչներին: Մենք չենք յանձն առնում նկարա-

գրել այն բոլորը, ինչ որ ուղարկած էր, բայց կյիշենք՝ «Քարի քահանայ» մի հիանալի վիմատիպ պատկերի մասին, որ ուղարկել էր լեզի Մօուհտ-Տեմպլը և «Սուրբ Փրանցիսկոսի տեսիլ» կոչւած պատկերի ակարել օրինակի մասին, հէնց Բերնժօնստն հեղինակի ձեռքով պատրաստած, որ յայտնի նկարիչ էր ժամանակակից Անգլիայում: Այդ պատկերը հայր Դամիանը ընդունեց և կախեց այն աղքատ սենեակում, որտեղ և ինքը մեռաւ:—Հետեւեալ օրը, գրում է Կլիֆօրդը, ես պէտք է ուղևորւէի պ. Սամուիլ Դամօնի շոգենաւերից մէկով, որ պարբերական գնացք էր սահմանել այցելել ցանկացողներին համար իրանց ազգական, մերձաւոր բորոտներին: Այդ օրը տեղս էին ժամանել երկու հարիւր մարդ. անջատման ժամը որ հասաւ, բոլոր բնակիչները ժողովեցան ավեր:

Երբ նաւը ճանապարհ ընկաւ, հայր Դամիանը շրջապատւած իր ժողովրդով՝ երկար ուղեկցում էր մեզ, ավիւմ կանգնած: Մայր մտնող արեգակի ճառագայթները լուսաւորում էին Մոլոկայի սարերը, որոնք և շուտով անյետացան: Դրանից յետ հայր Դամիանը ապրեց ընդամենը մի քանի շաբաթ: Հիւանդութիւնն անխնայ կերպով զարգանում էր. այդ դէպքում էլ հիւանդը չէր թողնում իր սովորական աշխատանքները և հոգու նոյն պարզութիւնն ունէր: Մարտի վերջերին նախազգարով իր մահը, նա գրեց հետեւեալ տողերը. «Ուղարկում եմ անկեղծ բարեւ թանկագին բարեկամիս՝ Կլիֆօրդին, խաղաղ բարձրանում եմ խաչի ճանապարհով և շուտով կհասնիմ իմ գողգոթային:

Դամիան - Դէ - Մէյստէր:»

1889 թ. Փետրւարի 19.ին վերջին նամակում իր եղբորը նա գրում է հետեւեալը. «Այն հիւանդութեան պատճառով, որին իմ ենթարկելիւր Աստուծուն հաճելի էր, ես

խոյս էի տալիս ձեզ յաճախ գրել: Ներկայումս ծանր հիւանդ եմ. բայց և այնպէս բազում եմ, բաւական եմ և միայն ցանկանում ես, որ Աստուծոյ կամքը կատարուի»: Նրա մօտ էր բարի հայր Կոնրադը, իսկ միւս քահանան փոխարինում էր նրան մերձակայ գիւղում: Երկու գլխութեան եղբայրներն էլ պարապում էին որբերի ապաստանարանում, ուր կային հարիւր երեխայ. իսկ գլխութեան քոյրերը խնամում էին բորոտներին, որոնք թւով հազար էին:

Այսպէս՝ հաշիւ տալով եղբորը, թէ ինչ դրութեան մէջ է թողնում իր յանձն առած առաքելութիւնը և զգալով մօտաւորութիւնը այն բոլորի, երբ վերջ կդրուի նրա տանջանքներին ու յանձնելով Լուվինի կուսակրօն միաբանութեան հայրերին հաղորդել իր ջերմ զգացմունքը, նոյնպէս յիշելով իր ընտանիքի անդամներին, հայր Դամիանը այսպէս էր աւարտում իր վերջին նամակը... «Ես տակաւին կարող եմ առանց դժւարութեան ամենայն օր կանդնել սեղանի առաջ և աղօթել, չմոռանալով ձեզանից ոչ մէկին: Դուք էլ աղօթէք ինձ համար և ուրիշներին էլ խնդրէք, որ աղօթեն, որովհետեւ հասնում է և մօտ է իմ վերջին ժամը: Թող մխիթարէ ինձ Աստուած և օգնէ նրան հաւատարիմ մնալ մինչև վերջ ու խաղաղ մեռնել»:

Մարտի 30-ին նա սկսեց մահան պատրաստել, լիովին խոստովանելով իր մեղքերը և նորոգելով իր աւած խոստումները: Նրա մօտ ներկայ էին երկու մենակեացներ՝ հայր Վինդօլին Միօլէնսը և հայր Կոնրադը, որոնք արդէն ամբողջ տարի է, ինչ աշխատում էին նրա հետ:

Միւս օրը նա ընդունեց Սուրբ Հաղորդութիւն: «Նայեցէք իմ ձեռքերին», ասաց նա իր սովորական հանգրստութեամբ, նրանք սկսեցել են. իսկ վերջերը փակում են: Այս հաստատ նշան է, որ մահը մօտ է: Նայեցէք իմ աշ-

քերին—կան նշաններ, որոնք չեն կարող ինձ սխալեցնել, որովհետև շատ բորոտներ են մեռել իմ աչքի առաջ...

«Ես կցանկայի մէկ անգամ ես տեսնուել եպիսկոպոսի հետ... Բայց Աստուած կանչում է ինձ իր մօտ ասնելու հանդէսների հանդէսը—Սուրբ Զատիկը: Թ'ո՞ղ օրհնեալ լինի Նրա Ս. Անունը»:

Ապրիլի 2-ին հայր Դամիանին օծեցին:

«... Ինչպէս բարի է Աստուած», քացականչեց նա. «ես ապրեցի մինչև այն օրը, երբ թողնում եմ այստեղ ինձանից յետոյ երկու քահանայ. հիւանդանոցում երեք բարի վթութեան քոյրեր. ինձ մնում է ասել. «Տէր, հիմա Քո ասածիդ պէս խաղաղութիւնով ես արձակում Քո ծառայիդ»: (Ղուկասու Աւետ. գլ. Բ. պ. 29): Բորոտների գործն ապահոված է, հիմա այլևս անհանգիստ չեմ. ես կարող եմ հեռանալ...»:—Երբ դուք այն աշխարհում կլինիք—ասաց հայր Կոնրադը—մի մոռացէք մեզ, որոնց թողնում էք այստեղ:—Ի հարկէ ո՞չ—պատասխանեց հայր Դամիանը—եթէ ես կարող եմ խնդրել Աստուծոյ սորմութիւնը, ապա ես այն կխնդրեմ մեր բորոտների համար:

—Խնդրեցէք ինձ համար ձեր սիրաբը—ասում էր հայր Կոնրադը. թողէք այն ինձ համար, ինչպէս եզրիան, իւր թիկնոցը:

—Ի՞նչ հարկաւոր է ձեզ այն,—ժպտալով պատասխանեց հայր Դամիանը.—նա վարակած է բորոտութիւնով:

Ապա հետեւեցին մի քանի անհանգիստ գիշերներ: Նա, որ միշտ գործունեայ, ժիր, ուժեղ էր, անշարժ պառկած էր դռակում՝ յատակի վրայ, ինչպէս մի ամենաշքաւոր բորոտ: Նրան համոզում էին, որ թոյլ տայ իր համար մահաճակալ բերել: Բայց նրա ձեռքով անցած փողերը ծախսել էին շքաւորների համար, նա մինչև անգամ բաւականաչափ փոխնորդ չուներ:

Ապրիլի 13-ի կէս գիշերին նրան վերջին անգամ հարգեցին: Նա արդէն չէր կարողանում խօսել և միայն բարեկամարար սեղմում էր եղբայրների ձեռքը:

Նա մեռաւ ապրիլի 15-ին՝ բոլորովին խաղաղ, կարծես թէ պատրաստում էր քուն մտնել: Մահից յետոյ բորոտութեան հետքերը երեսից և ձեռքերից անյետացան:

Նրա գերեզմանը, իր ցանկութեան համաձայն, փորեցին Pandanus ծառի տակ, որի հովանու տակ այնքան գիշերներ էր անց կացրել նա իր առաջին գործունէութեան ժամանակ: Այժմ նոյն ծառը գտնուում է գերեզմանատան շրջապարսպի մէջ: Որպէսզի լրացնենք ասածներս, աւելացնենք և այն, որ հայր Դամիանի հողին ապրում է Մոլոկայի միաբանութեան մէջ: Երբ Հերման եպիսկոպոսը տատանում էր թէ՛ ո՞ւմ ընտրել, հարցրեց քահանաներից. ո՞վ է ցանկանում Մոլոկայի գնալ, բոլորը ձայնակցեցին այդ հրաւերին, և գնացողը ասաց, որ մի առանձին բաւականութիւնով է կատարում եպիսկոպոսի պատէրը:

Երբ տպագրւում էին սոյն տողերը, մենք իմացանք, որ հայր Դամիանի եղբայր՝ Պամֆիլին աշխատում էր թոյլաութիւն խնդրել եղբօրը փոխարինելու և ներկայումս նա արդէն գնացել է Ուիկիանիա:

Մենք զիտենք թէ՛ ինչպէս հայր Դամիանի կեանքը հոշակեցաւ անգլիական հասարակութեան մէջ, ուստի հասկանալի է թէ ինչ տպաւորութիւն արեց և նրա վախճանը:

Ամենաընտիր ամսագրերը նրա յիշատակին յօդածներ նւիրեցին: Չապման քահանան Լոնդոնում հասարակութեանը զիմեց նոր հրաւերքով, որ մի գումար ժողովի հայր Դամիանի յիշատակն անմահացնելու համար, իսկ փողը յանձնել Կարգինալ-արքեպիսկոպոսին:

Հէնց այդ միջոցին Փարիզի ցուցահանդէսից վերագարձաւ Վալլիսի պրինցը:

Իմանալով, թէ ինչպէս են ցանկանում յարգել մի-
սիօնարի յիշատակը, պրինցը ոչ միայն արտայայտեց իր
համակրութիւնը դէպի այդ գործը, այլ ցանկացաւ, որ այդ
առիթով կազմած յանձնաժողովը հաւաքւի իր մօտ Մալ-
բօրու-Քօուզում և իր նախագահութեամբ:

Պրինցի ագիտանա սէօր Փրանցիս Նոլլիսը այսպէս
է գրում.

«Նորին Արքայական Մեծութիւն Վալլիս, Պրինցը
ինձ յանձնեց հաղորդել, որ նա ջերմ զգացմունքով տեղե-
կացաւ այն մարդկանց դիտաւորութեան մասին, որոնք
ցանկանում են հայր Դամիան միսիօնարի յիշատակը յար-
գել և միևնոյն ժամանակ շարունակել այն գործը, որին
զոհ բերեց իր կեանքը այդ սուրբ մարդը:

Նորին Արքայական Մեծութիւնը լիովին համաձայն է
այդ առիթով իրան յայտարարւած մտքին, և ցանկանում է
լինել յանձնաժողովի նախագահ, որոնք կժողովին քննե-
լու՝ թէ ինչ կերպ աւելի լաւ է յարգել հայր Դամիանի յի-
շատակը:

1889 թ. Յունիսի 17-ին Մալբօրու-Քօուզում ժողո-
վեցան—քաղաքական, աշխարհական, բժշկական, հոգևոր
աշխարհի ներկայացուցիչները, իրանց զլուս ունենալով
Վեստմինստերեան Կարդինալ-արքեպիսկոպոսին և կաթո-
լիկ եպիսկոպոս Սալֆօրդին:

Միսիօնարի անձնական բարեկամները—Չապմանը և
Կլիֆօրդը նոյնպէս հրաւիրւած էին այդ ժողովին:

Ահա Վալլիսի պրինցի արտայայտած ազնիւ խօսքերը.
«Հայր Դամիանի կեանքը և հերոսական մահը ոչ միայն ջերմ
համակրութիւն յարուցին, այլև խոր տպաւորութիւն արին
միացեալ թագաւորութեան մէջ: Մենք համոզեցինք, որ
մի որոշ չափով պարտաւոր ենք հետեւել նրա օրինակին...
Նորա, որոնց մենք պարտաւոր ենք օգնել, մեզ անձանօթ

օտար երկրացիք չեն,—դորա նոյնպէս Մեծ-Բրիտանիայի
հպատակներ են—դորա Հնդկաստանի և ուրիշ գաղութնե-
րի բնակիչներ են, որոնք մեր օժանդակութեան վրայ
մեծ յոյսեր ունին, քան թէ աղքատ հաւայցիները մի բել-
գիական քահանայի անձնագործութեան վրայ, որ նրանց
պատճառով զոհեց իր կեանքը: Որպէսզի ցոյց տանք, թէ
ինչպէս բարձր ենք դասում նրա ազնիւ կեանքը, առաջար-
կում եմ յանձնաժողովին արտայայտել այդ երեք տեսակ.

1) Մոլոկայում սրտեղ հանգչում է նրա աճիւնը, ար-
ձան կանգնացնել:

2) Հիմնել հայր Դամիան անունով մի հաստատու-
թիւն, որտեղ պէտք է մասնագիտաբար ուսումնասիրել այդ
սարսափելի հիւանդութիւնը—բորտութիւնը, և միջոցներ
պատրաստել նրանց համար, որոնք ցանկանում են գնալ
և նւիրել իրանց նրա ուսումնասիրութեանը:

3) Մի ճիշտ ու մանրամասն հետազօտութիւն անել
բորտոների դրութեան մասին Հնդկաստանում և ընդհա-
նուր Բրիտանական թագաւորութեան մէջ:

Իմ առաջարկութիւնները բացատրութեան կարօտ
չեն, կաւելացնեմ միայն, թէ այն փողերը, որ մենք կժո-
ղովենք, պէտք է գործ ածել հայր Դամիանի ցոյց տուած
ուղղութեամբ և այդպիսով մենք կշարունակենք նրա գոր-
ծը՝ թեթևացնել բորտոների տանջանքը»: Վալլիսի պրինցը
ժողովով ընդունւած առաջարկութիւններն իրագործելու
համար ստորագրեց 100 ֆ. ստ.: Մեծ և անկեղծ էր Չապ-
ման քահանայի ուրախութիւնն այդ օրը:

Ահա նա ինչ է գրում այդ առիթով.

«Հայր Դամիանի անունը կմնայ մարդկանց յիշողու-
թեան մէջ: Նա հաղարարու մարդկանց սրտերում վառեց
ցանկութիւն ծառայել մեթաւորներին:

Վերջապէս գիտութեան մարդիկ՝ մի կողմից սգևոր-

լած այդ մարդու բարձր օրինակով, որ դուրս է եկել
կուեկու տանջողներին օգնելու համար, և միւս կողմից
քաջալերւած անդլիական գահի ժառանգով, կրիմեն նոր
եռանգով այն հետազօտութիւններին, որոնք թեթեւութիւն
կտան այդ տանջողներին և այն ժամանակ լիովին յար-
թանակով կյարգուի հայր Դամիանի յիշատակը»:

Վերջացնելով սոյն աշխատութիւնս, խոստովանում եմ, որ
այդ գործը մօտ էր սրտիս: Մի ժամանակ, երբ շատերի մտա-
ւոր ոյժերն ուղղւած են դէպի այն, որ պատօրեն սրտեր և
թուլացնեն մարդկանց բարի կամքը, ասում եմ, մի ատե-
լութեան ու մրցման ժամին, երբ կարծես թէ կորել է
ճշմարտութեան զգացմունքը, երբ բոլորն ապրում են միայն
խօսքերով և մինչև անգամ սէր և եղբայրութիւն խօսքերը
լոկ դատարկ հնչիւններ են, մխիթարական է հանդիպել
մի այնպիսի կեանքի, որ ապիս է այդքան արդիւնաւէտ
գործունէութիւն մարդկութեան բարօրութեան համար:

Այդպիսի կեանքն առաջ է բերում ընդհանուրի միա-
համուռ զարմացումը, այդպիսի կեանքը ծնեցնում է կա-
րեկցութեան և ողորմածութեան զգացումներ:

Սէրը և ողորմածութիւնը վառեցին այդ միութեան
կայծը և թէպէտ վարկենաբար, բայց և լուսաւորեցին բո-
լորին երկնային անշիջանելի լոյսի ճառագայթներով:

«Կենդրոնական գրավաճառանոցում» ծախուում
են մեր հետեւեալ ժողովրդական հրատարակու-
թիւնները.

1. Ղայթմազանց Միքէլը 8 կոպ.
2. Դրօշակ-Լֆօրի 8 »
3. Միսիօնար հայր Դամիան Վէյստէրի կեանքը 10 »

Գինն է 10 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0160146

